

թին դրամի արժեվորումն է և ԱՄՆ դոլարով խնայողությունների ու արտասահմանից մուտքերի առկայությունը: Հաջորդող իրական եկամուտների աճն է և երրորդ, թերևս ամենակարևոր գործոնը առևտրային բանկերում ավանդների չնայած բավականին բարձր տոկոսադրույքներ ունենալը, սակայն մաս դեռևս չվերականգնված հոսանքությունը:

Շուկայական տնտեսություն ունեցող երկրների զարգացման միտումների վերագնահատումը թույլ է տալիս հետևություն անել, որ դրանց մի մասն էլ արդեն որոշ չափով սկսում են դրսևորվել մաս մեր մոտ: Իսկ տնտեսական աճի կայունության և երկարաժամկետ բնույթի ապահովման ձգտումը պահանջում է ֆինանսական շուկայի գործողության արդյունավետության բարձրացում, ինչը կապահովի խնայողությունները ներդրումների վերածելը, ինչն էլ իր հերթին պայմանավորում է մաս պետության ակտիվ միջամտության անհրաժեշտությունը: Ընդ որում խոսքը ոչ միայն ուղղակի միջամտության մասին է, այլ մաս անուղղակի կարգավորիչ ազդեցությունների, որոնք ուղղված են դեպի բոլորին հասկանալի և բոլորի կողմից ընդունելի «խաղի կանոնների» ստեղծում, օրենքների պահպանումն ու կատարելագործումը, պետական և մունիցիպալ արժեթղթերի շուկաների զարգացում, բարենպաստ ներդրումային միջավայրի և հարկային դաշտի ձևավորում և այլն:

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Զորանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ, ԴՐԱ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ապահովագրության, որպես տնտեսական կատեգորիայի, տնտեսության զարգացման կոնտեքստում դրա առանցքային դերի և նշանակության բազմաթիվ դասագրքային դիտարկումներ կան, որոնք, չնայած դրանց մատչելիությանը հասարակությանը, այնուամենայնիվ հասանելի չեն վերջինին՝ դրանց ընկալելիության իմաստով: Այդպիսով հայաստանյան իրականությունում այս հանգամանքը հանդիսանում է ապահովագրության նկատմամբ ներուժային պահանջարկի ձևավորման, իրացման և ապահովագրական շուկայի զարգացման էական խոչընդոտներից մեկը: Ուստի այս առումով չափազանց կարևոր է ընկալելի դարձնել բնակչությանը ապահովագրության թե՛ հասարակական և թե՛ տնտեսական օգտակարությունն ու անհրաժեշտությունը: Հասարակության կրթում կոչվող այս գործընթացին պետք է լծվեն ոչ միայն ապահովագրողներն ու ապահովագրության վերահսկողություն իրականացնող մարմինը, այլև կառավարող բոլոր մարմիններն ու մամուլը:

Ընդլայնված վերարտադրության ժամանակակից պայմաններում ապահովագրությունը հանդես է գալիս հասարակության տնտեսական և սոցիալական կայուն զարգացման գլխավոր գործոններից մեկի դերում: Անցումային երկրների տնտեսական և տեխնիկական ներուժի մշտական աճը, հասարակության կուտակվող հարստության ավելացումն ու դրան գույքընթաց աճող տեխնոգեն, տնտեսական և սոցիալական տարաբնույթ ռիսկերի աճը ուղղակիորեն և անխուսափելիորեն պայմանավորում է ապահովագրական լայնամասշտաբ հարաբերությունների ձևավորումը, որոնք կապահովեն անկանխատեսելի նյութական և ֆինանսական կորուստների ժամանակին փոխհատուցումը:

Ապահովագրությունը պաշտպանում է ներդրված կապիտալը, խթանում արտադրության զարգացումը, լուծում սոցիալական հիմնախնդիրները, թեթևացնում տնտեսության ճգնաժամային դժվարությունները: Ապահովագրությունը, որի հաջող զարգացումը հնարավոր է միայն կայուն տնտեսության պայմաններում, հենց ինքն է ընդունակ այդպիսի կայունացման գործոն հանդիսանալ: Այն իր մեջ պարունակելով կայունացնող կառուցվածքային և ֆունկցիոնալ ներուժ՝ հանդես է գալիս որպես պետական ռազմավարական համակարգի չափազանց կարևոր բաղադրամաս:

Ապահովագրությունը դասվում է տնտեսական գործունեության առավել հին և կայուն ձևերի շարքին, որոնք ծագել են արտադրական հարաբերությունների ձևավորման հնագույն ժամանակներում: Պատմականորեն առաջանալով վնասների փոխհատուցման անհրաժեշտությունից՝ ապահովագրությունն իր զարգացման տևական ընթացքում կրել է էական փոփոխություններ և այժմ տարածվում է բազմաթիվ դեպքերի վրա, երբ վնասի առաջանալը կապված է այն կատարողի քաղաքացիաիրավական պատասխանատվության հետ: Այդպիսի դեպքերում ապահովագրությունը տուժողի համար ծառայում է որպես նրա գույքային շահերի պահպանման երաշխիք: Հետագայում գույքային ապահովագրության հետ միասին առաջացավ անձնական ապահովագրությունը, որը երաշխավորում էր որոշակի դրամական փոխհատուցում մահվան, հիվանդության, լրակեցության դեպքերում:

Ապահովագրությունը, որպես տնտեսական կատեգորիա, իրենից ներկայացնում է տնտեսական հարաբերությունների յուրահատուկ համակարգ, որը ներառում է դրամական միջոցների որոշակի նպատակային ֆոնդերի ձևավորման և օգտագործման ամբողջություն՝ տարբեր ոչ ցանկալի, անկանխատեսելի երևույթների (ռիսկերի), ինչպես մաս քաղաքացիների կյանքում առաջացած որոշակի իրադարձությունների հատուցման համար: Ապահովագրություն կատեգորիայի տնտեսական անհրաժեշտությունն է հայտ է գալիս հատկապես, երբ պետությունն իր տրամադրության տակ չունենալով բավարար միջոցներ, զրկված է ֆինանսական ռեսուրսներով մանրեղյու հնարավորությունից: Տնտեսության և քաղաքացիների գույքային, ինչպես մաս

կյանքի ապահովագրական պաշտպանվածության անհրաժեշտությունը օբյեկտիվ պայմաններ է ստեղծում ապահովագրական համակարգի կազմավորման համար:

Տնտեսության մակարդակով ապահովագրությունն իրականացնում է ռիսկերի համահարթեցման կարևորագույն գործառնությունը՝ այդպիսով ապահովելով դրա ճյուղերի գործունեությունն առանց ցնցումների և ընդհատումների: Ապահովագրության շնորհիվ երկրի արտադրական և տնտեսական այլ գործընթացների անընդհատության ապահովումը հիմնված է տնտեսական ռիսկերի միավորման և դրանց հատուցման կապակցությամբ փակ վերաբաշխման հարաբերությունների վրա:

Տնտեսության զարգացման տեսանկյունից ապահովագրությունը հանդիսանում է արտադրական ակտիվության և տնտեսական առաջընթացի խթանման հիմնական գործոն: Ապահովագրական համակարգի կայունությունը երաշխիքներ է ապահովում ձեռնարկություններին՝ համարձակ և շահութաբեր գործունեության, շահույթի վերաներդրման, իսկ անհատներին՝ սեփականության, եկամուտների և առողջության հուսալի պաշտպանության համար:

Միաժամանակ ապահովագրական հատվածն իրենից ներկայացնում է տնտեսության այն ոլորտներից մեկը, որտեղ կուտակվում են նշանակալի դրամական միջոցներ՝ ուղղվելով խոշոր ներդրումային նախագծերի, ազգային և ճյուղային նշանակության ծրագրերի, որը բացահայտում է դրանց ռազմավարական բույթն ու մեծ ֆինանսական ներդրումը¹:

Որպես տնտեսական գործունեության տեսակ՝ ապահովագրությունը նպաստում է տնտեսության արդյունավետ կառավարմանը՝ ռիսկերի կառավարման, դրանց կանխման կամ դրանց հետևանքով առաջացող ռիսկերի հատուցման ճանապարհով: Այս իմաստով դժվար է գերազանահատել ապահովագրական համակարգի ազդեցությունը տնտեսության մյուս ճյուղերի վրա՝ հաշվի առնելով ապահովագրական համակարգում առկա ներդրումային ահռելի ներդրումը: Ապահովագրական ֆոնդերի միջոցների հաշվին տնտեսության ճյուղերում ներդրվող կապիտալի ծավալները մի շարք զարգացած երկրներում էապես գերազանցում են բանկային համակարգի ակտիվների (վարկային ներդրումների) ծավալը: Այս հանգամանքը չափազանց նպաստավոր հիմք է ստեղծում ապահովագրական համակարգի և այդ ճյուղերի միջև համաչափ և դինամիկ զարգացման համար:

Ապահովագրությունը տնտեսական հարաբերությունների համակարգ է, որը ներառում է իրավաբանական և ֆիզիկական անձանց ապահովագրավճարների հաշվին ձևավորված հատուկ ֆոնդի միջոցները, ինչպես նաև դրանց օգտագործումը բնական աղետների և այլ ոչ ցանկալի (արտակարգ) պատահարների հետևանքով առաջացած վնասների փոխհատուցման, քաղաքացիների կյանքում տարբեր դեպքերի ի հայտ գալու դեպքում օգնության տրամադրման համար:

Ապահովագրության էության մեկնաբանության համար ելակետային է վնասի բաշխումը ապահովագրված մասնակիցների միջև: Համատեղ ապահովագրությունը վերջինիս տիպիկ օրինակն է: Բացի դրանից, ապահովագրությունը միշտ փոխկապակցված է ապահովագրական դեպքերի առաջացման հավանականության հետ, այսինքն, ապահովագրությանը բնորոշ է պարտադիր հատկանիշ՝ հարաբերությունների հավանական բնույթը:

Ապահովագրության, որպես տնտեսական կատեգորիայի, ողջ փիլիսոփայությունը կառուցվում է այնպիսի մի առանցքային գաղափարի և դրանից ածանցվող հարակից հասկացությունների հենքի վրա, ինչպիսին է ռիսկը: Ռիսկ հասկացության ծագման հետ է օբյեկտիվորեն կապվում նաև ապահովագրության ծագումը մարդկային հասարակության ձևավորման հնագույն ժամանակաշրջանում: Եթե բնորոշելու լինենք ռիսկը որպես կատեգորիա, ապա այն մարդու, հասարակության կյանքում կամ տնտեսվարող սուբյեկտի գոյության ընթացքում անցանկալի և անկանխատեսելի դեպքերի, իրադարձությունների կամ փոփոխությունների ի հայտ գալու հավանականությունն է:

Ապահովագրության ուսումնասիրության շրջանակներում բացահայտվող դրա բազմակի բնույթը պայմանավորված է սեփականատերերի կողմից ապահովագրական հետաքրքրությունների դրսևորման բազմազանությամբ: Այնուամենայնիվ, արևմտյան և արևելյան տեսությունները նույն կերպ են տեսաբանում ապահովագրական հարաբերությունների տնտեսական հիմքը: Դա հասարակական արտադրության ռիսկային բնույթն է, անկանխատեսելիության օբյեկտիվ պայմանները, տնտեսական գործակալների գործունեության ընթացքում կորուստների հավանականությունը, որոնք էլ հենց ծնել են շահագրգիռ մասնակիցների միջև վնասների փակ և սոլիդար բաշխման միջոցով նյութական վնասների հատուցման գաղափարը²: Եթե առանձին վերցրած յուրաքանչյուր սեփականատեր փորձեր վերականգնել կրած վնասը ինքնուրույն, նրան անհրաժեշտ կլինեին ձևավորել համապատասխան պահուստ՝ իր սեփականության ամբողջ արժեքի չափով, որը ակնհայտորեն տնտեսապես ձեռնառու չէր լինի: Շահագրգիռ մասնակիցների հաշվին որոշակի դրամական (ապահովագրական) ֆոնդերի ձևավորումն ու դրանց բաշխումը ժամանակի ու տարածության մեջ արտացոլում են ապահովագրական հարաբերությունների հիմքը:

Վնասի սոլիդար բաշխումը նշանակում է, որ բոլոր շահագրգիռ մասնակիցները համատեղ մասնակցում են դրանցից մեկի կամ մի քանիսի կողմից տվյալ որևէ ժամանակում կամ տարածությունում կրած վնասի ծածկմանը՝ նախապես կատարված դրամական ներդրումների հաշվին՝ ելնելով հավանականությունների տեսության հիմնարար տրամաբանությունից, ապահովագրական դեպքը չի կարող տեղի ունենալ միաժամանակ բոլոր ապահովադիրների մոտ: Վնասի փակ և սոլիդար բաշխումը ենթադրում է ներդրված միջոցների բաշխում միայն շահագրգիռ մասնակիցների շրջանակում:

¹ Сахирова Н. П., Страхование, М.: 2006.

² Сахирова Н. П., Страхование, М.: 2006.

Ապահովագրության բովանդակությունն ամբողջացնում է դրա նշանակությամբ ու գործառնություններով (ֆունկցիաներով): Ապահովագրության, որպես տնտեսական գործունեության ձևի, նշանակությունը դրսևորվում է հասարակական տնտեսական և սոցիալական տարբեր տեսանկյուններից: Այսպես, օրինակ բնակչության դեպքում յուրաքանչյուր ապահովագրված քաղաքացի, շնորհիվ ընկերությունների կողմից ձևավորվող ապահովագրական պահուստների, կարող է ապահովվել իրեն անհրաժեշտ միջոցներով բուժման, առկա կենսամակարդակի պահպանման (աշխատունակության կորստի դեպքում), սեփական եկամուտների ավելացման, ունեցվածքի պահպանման և վերականգնման (վնասման կամ կորստի դեպքում) և այլն: Հատկանշական է, որ քաղաքացիների ապահովագրության նշանակությունն ավելի է մեծանում՝ հաշվի առնելով, որ այն մասն լուծում է երրորդ անձանց շահերի պաշտպանության խնդիրը՝ ապահովելով ապահովադրի (ապահովագրված անձի) կողմից նրանց հասցված վնասի հատուցման երաշխիքներ: Արդյունքում սոցիալ-տնտեսական հատվածում էապես լուծվում է բնակչության կենսամակարդակի պահպանման կարևորագույն խնդիրը:

Ապահովագրության նշանակությունը ձեռնարկատիրական գործունեության համար մեծ է մի քանի իմաստներով: Նախ ձեռնարկատիրական ռիսկերի, պատասխանատվության և գույքի ապահովագրության տեսակները թույլ են տալիս տնտեսավարող սուբյեկտներին ապահովել դրանց գործունեության անընդհատությունը, եկամտաբերությունն ու ֆինանսական կայունությունը:

Երկրորդ. ապահովագրությունը ամբողջությամբ կամ մասնակիորեն ազատում է ձեռնարկատիրոջը ահռելի դրամական ֆոնդերի ձևավորման, դրանցում կապիտալի սառեցման անհրաժեշտությունից՝ էապես բարձրացնելով ձեռնարկության իրացվելիությունն ու վճարունակությունը:

Երրորդ. ձեռնարկատերը ապահովագրության պարագայում նախապես տեղյակ է լինում ռիսկի արժեքին (այն է՝ ապահովագրավճարը), քանզի այն ամրագրված է ապահովագրական պայմանագրում, և այդ արժեքը իր համար կայուն մեծությունը ապահովագրության ողջ ժամկետի ընթացքում:

Արդյունքում ձեռնարկատերը ստանում է իր միջոցների կուտակման տեմպերի աճի և սեփական շահույթի հաշվին իր գործունեության ընդլայնման իրական հնարավորություն:

Շուկայական տնտեսության պետական կարգավորման կարևորագույն խնդիրներից մեկը հասարակական արտադրության կայուն տնտեսական աճի ապահովումն է: Այս առումով մեծ է ապահովագրության դերը մասնավորապես և հասարակական արտադրության համար: Ապահովագրության պետական բյուջեն, պետական սոցիալական ապահովության պահուստները, պետական կենսաթոշակային ֆոնդը էապես բեռնաթափվում են բազմաթիվ սոցիալական ծրագրերի անհրաժեշտությունից, դոտացիաներից, սուբսիդիաներից և պետական աջակցության այլ ձևերից: Այս է պետության կողմից ապահովագրական համակարգի զարգացման խնդրում դրսևորվող մեծ շահագրգռվածության հիմնական պատճառներից մեկը:

Պետության և հասարակական արտադրության տեսանկյունից ապահովագրության մյուս կարևոր նշանակությունը հանգում է տնտեսության մասշտաբով դրա մեծ ներդրումային ներուժի ստեղծմանը: Այսպես, ապահովագրական ընկերությունների կողմից հավաքագրված ահռելի մեծ ծավալի ապահովագրական պրեմիաների հաշվին ձևավորված դրամական ֆոնդերը (պահուստները) ծառայում են որպես տնտեսության տարբեր ճյուղերում ներդրումների իրականացման լուրջ աղբյուր՝ մասնակցելով երկրի տնտեսությունում ֆինանսական միջնորդության և կապիտալի վերաբաշխման կարևոր խնդրի լուծմանը:

Եվ վերջապես, երրորդ կարևոր նշանակությունը. ապահովագրությունը ստանում է վերոնշյալ ներդրումների և սեփական գործունեության շրջանակների ընդլայնման արդյունքում նոր աշխատատեղերի ստեղծման և այդպիսով գործազրկության գերխնդրի լուծման շնորհիվ¹:

Այսպիսով միկրոտնտեսական մակարդակում ապահովագրությունը լուծում է հետևյալ հիմնական խնդիրները.

- ռիսկերի փոխանցումները
- վնասների հատուցումները
- ֆինանսավորման հնարավորությունների մեծացումը
- Մակրոտնտեսական մակարդակում ապահովագրությունը լուծում է հետևյալ հիմնական խնդիրները.
- ապահովում է հասարակական վերարտադրության գործընթացի անընդհատությունը,
- ազատում է պետությանը լրացուցիչ ծախսերից,
- հավաքագրում է ներդրումային ռեսուրսներ,
- խթանում է գիտատեխնիկական առաջընթացը,
- իրականացնում է սոցիալական գործառույթ:

Հայտնի է, որ ցանկացած տնտեսական կատեգորիա, լուրջ դեպքում՝ ապահովագրությունը, իր էությունը արտահայտում է օբյեկտիվորեն դրան վերապահված և դրա կողմից իրականացվող որոշակի գործառնություններով (ֆունկցիաներով), որոնց միջոցով և արդյունքում կայանում է դրա հասարակական նշանակությունը: Ապահովագրության գործառնությունները բազմատեսակ են ներկայացվում գրականության մեջ, սկսած ապահովագրական մասնագիտացված ֆոնդերի ձևավորումից ու քաղաքացիների անձնական նյութական ապահովումից (Շախով, Ֆեդորովա) մինչև կանխարգելիչ ու խնայողական գործառնությունները (Սախիրովա, Գոմելյա, Տուրբինա և այլն):

Դիտարկելով տարբեր հեղինակների կողմից վերոնշյալ գործառնությունների դասակարգումները՝ դրանք կարելի է ամբողջացնել հետևյալ երեք պայմանական խմբերի ներքո.

¹ Гомелля В. Б., Страхование, М.: 2006.

- ռիսկային (հակառիսկային) ֆունկցիա
- նախագրուշացնող (կանխարգելիչ) ֆունկցիա
- խնայողական (կուտակման) ֆունկցիա

Ապահովագրության հակառիսկային ֆունկցիան արտահայտում է ապահովագրության հիմնական հասարակական նշանակությունը, այն է՝ ռիսկային իրավիճակների ի հայտ գալու դեպքում տուժած անձանց շահերի պաշտպանության նպատակով վերջինների վնասի հատուցումը: Հատկապես այս գործառույթի շրջանակներում է իրականացվում ապահովագրական դեպքերի հետևանքների փողային արտահայտությամբ արժեքի սովորար բաշխումը ապահովագրության մասնակիցների միջև:

Ապահովագրության հակառիսկային գործառույթը արտահայտված է ապահովագրի կողմից հնարավոր վնասի հատուցման պայմանով ապահովագրողին ռիսկի փոխանցման մեխանիզմում: Սակայն ռիսկի փոխանցման մեխանիզմն արտահայտվում է ոչ միայն ուղղակի ապահովագրությամբ, այլև ապահովագրական այնպիսի հարաբերություններով, ինչպիսիք են վերաապահովագրությունն ու համաապահովագրությունը:

Ապահովագրության կանխարգելիչ գործառույթը արտահայտում է ապահովագրության կատեգորիայի հիմնական առանձնահատկություններից մեկը՝ ապահովագրության մասնակիցների (ապահովագրող և ապահովադիր) տնտեսական շահագրգռվածությունը ռիսկերի տեղի չունենալու մեջ: Այս շահագրգռվածությունը հանգեցնում է նրան, որ ապահովագրողներն իրենց առջև խնդիր են դնում հնարավոր ռիսկային իրավիճակների նախագրուշացման և ռիսկերի կանխարգելման: Այս ուղղությամբ ապահովագրողները միջոցառումներ են ձեռնարկում ռիսկերի տեղի ունենալու հավանականության նվազեցման, դրանց հետևանքով առաջացող կորուստների կրճատման ուղղությամբ՝ իրականացնելով որոշակի ծախսումներ ապահովադիրներից ստացված ապահովագրավճարների հաշվին: Այս գործառույթի իրականացմանը մասնակցում են նաև ապահովադիրները՝ ելնելով գույքի սեփականատիրական, անձի կյանքի և առողջության պահպանման շահագրգռվածությունից:

Եվ երրորդ կարևոր գործառույթը ապահովագրական ֆոնդերի տեսքով լրացուցիչ ֆինանսական միջոցների խնայողության և դրանց կուտակման գործառույթն է, որն ինչպես արդեն նշել ենք, ձևավորում է լուրջ ներդրումային ներուժ՝ երկրի տնտեսության մասշտաբով:

Ապահովագրության՝ որպես տնտեսական կատեգորիայի, սահմանումները բազմազան են: Ապահովագրական դոկտրինայում գոյություն ունեն ապահովագրության հասկացության սահմանման տեսական դպրոցների ներկայացուցիչների բազմաթիվ տեսակետներ: Նրանց մի մասը դիտարկում է ապահովագրությունը՝ որպես մարդկանց սպառնացող վտանգների դեմ պայքարի միջոց, լիովին ժխտելով դրա կուտակային ձևերը: Մեկ այլ տեսակետ, որ ապահովագրությունը գույքի կամ փողի նկատմամբ պահանջի բավարարման մեխանիզմ է՝ դրանց պակասի կամ կորստի դեպքում: Ապահովագրական տեսության առավել տարածված դատողություններից մեկը պնդում է, որ ապահովագրության նշանակությունը հանգում է վնասների հետևանքների վերացման համար անհրաժեշտ փողերի նկատմամբ ապագա պահանջների բավարարման ապահովմանը: Այն ստացել է «էվենտուալ պահանջների տեսություն» անվանումը, որի հիմնադիրը իտալական տնտեսագիտական դպրոցի ներկայացուցիչ Գոբին է¹:

Ռուսական ապահովագրական դպրոցի ներկայացուցիչ Մերեբրովսկին դեռևս 20-րդ դարի սկզբերին դիտում էր Գոբինի տեսությունը որպես ֆունդամենտալ գաղափար՝ համարելով ապահովագրությունը մեծաքանակ անձանց միջև ապագա, անհայտ և պատահական պահանջումներների բաշխման ձև: Իր դատողություններում նա վեր է հանում Գոբինի տեսության ուսցիռնալ հատիկը, որը կայանում էր նրանում, որ *ապահովագրության հիմնական նպատակը պատահական պահանջումներների բավարարումն է*²: Այդպիսով էվենտուալ պահանջումներների բավարարումը պատահական գործոնների ազդեցության ներքո ծագող պահանջումների բավարարումն է:

Տնտեսագիտական գրականությունում բազմաթիվ ժամանակակից հեղինակներ ևս անդրադարձել են այս հասկացությանը: Այսպես, Վ.Բ. Գոմելյան իր «Ապահովագրություն» ձեռնարկում սահմանում է ապահովագրությունը որպես տնտեսական հարաբերություններ, որոնք ներգրավում են իրենց մեջ մի կողմից պատահական վտանգներից իրենց օրինական տնտեսական և գույքային շահերի պաշտպանության կարիք ունեցող անձինք (ֆիզիկական և իրավաբանական), իսկ մյուս կողմից՝ ձեռնարկությունները, որոնք ի վիճակի են արհեստավարժորեն ապահովել նման պաշտպանություն՝ վերոնշյալ անձանց կողմից այդ ծառայության համար վճարվող դրամական միջոցներից ձևավորված ապահովագրական պահուստների (առավելապես՝ դրամական ֆոնդերի) միջոցով³: Ուշագրավ է ապահովագրության՝ որպես տնտեսական կատեգորիայի, սահմանումը ըստ Ն.Պ. Սախիրովայի. ապահովագրությունը՝ ապահովագրական դեպքերի տեղի ունենալիս քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների անձնական, գույքային և ֆինանսական շահերի պաշտպանության նպատակով դրամական ֆոնդերի կազմավորման կապակցությամբ ծագող տնտեսական հարաբերությունների համակարգ է, որը ձևավորվում է այդ դեպքերի հետևանքով առաջացող վնասի փակ և սովորար բաշխման և դրա դրամական հատուցման հենքի վրա⁴:

Վ.Բ. Բյաքիլինի մոտեցումը ապահովագրության հասկացությանը փոքր-ինչ այլ է: Նա դիտարկում է առանձին կյանքի և ոչ կյանքի ապահովագրության տեսակները՝ սահմանելով կյանքի ապահովագրությունը որպես ապահովագրողի և ապահովադիրի միջև պայմանագրային հարաբերությունների ամբողջություն, որոնց առարկան հանդիսանում է ապահովագրական պայմանագրով ամրագրված ռիսկով, ապահովագրական

¹ Аврамов В.Ю., Страхование, М.: 2007.

² Сереровский В.И., Страхование, М.: 1927.

³ Гомеля В. Б., Страхование, М.: 2006.

⁴ Сахирова Н. П., Страхование, М.: 2006.

գումարով, ապահովագրական հատուցումների ժամկետներով և պայմաններով սահմանվող գույքային շահը, իսկ ոչ կյանքին՝ գույքային ապահովագրության տեսակների ամբողջություն, որոնցով նախատեսվում է ապահովագրողի որոշակի պարտավորություններ՝ կապված ապահովագրության օբյեկտին հասցված ամբողջական կամ մասնակի վնասի չափով կատարվելիք հատուցման հետ:

Վերջապես, Ա.Կ. Շախովը ապահովագրությունը բնութագրում է որպես ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից կրած վնասի հատուցման ձև՝ բազմաթիվ անձանց միջև այդ վնասի բաշխման միջոցով: Ըստ նրա՝ ապահովագրությունը, որպես տնտեսական կատեգորիա, իրենից ներկայացնում է տնտեսական հարաբերությունների համակարգ, որն իր մեջ ներառում է բազմաթիվ անկանխատեսելի անբարենպաստ երևույթների (ռիսկերի) հետևանքով առաջացող վնասների հատուցման, ինչպես նաև քաղաքացիների կյանքում որոշակի իրադարձությունների տեղի ունենալու դեպքում, վերջիններին օգնության ցուցաբերման նպատակով դրամական միջոցների նպատակային ֆոնդերի ձևավորման մեթոդների և ձևերի ամբողջությունը¹:

Ընդհանրացնելով և համադրելով վերը բերված տարատեսակ մոտեցումներն ու ձևակերպումները՝ կարելի է տալ ապահովագրության առավել համապարփակ և մատչելի մի ձևակերպում.


ապահովագրությունն իրենից ներկայացնում է այնպիսի տնտեսական իրավահարաբերությունների մի համակարգ, որոնք ծագում են մեկ անձի կողմից իրեն, իր ընտանիքին, սեփականությանը, բիզնեսին և այլ իրավունքներին (ապահովագրության օբյեկտներ) սպառնացող վտանգները (ռիսկերը)՝ որոշակի վճարի (ապահովագրավճար) պայմանով, երրորդ մասնագիտացված անձին փոխանցելու կապակցությամբ, որը պարտավորություն է ստանձնում ապահովագրական պայմանագրով ամրագրված օբյեկտի արժեքի (ապահովագրական գումար) սահմաններում իրականացնել ապահովագրական օբյեկտի լրիվ կամ մասնակի կորստի հետևանքով առաջացող վնասը որոշակի ժամանակի և տարածության մեջ՝ ապահովագրական վճարների միջոցով ձևավորված հատուկ դրամական ֆոնդերի (ապահովագրական պահուստներ) հաշվին:

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոբանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՎ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ տնտեսությունն սկսեց ինքնուրույն գործել, առաջացավ ապահովագրության՝ որպես տնտեսական կատեգորիայի կարևորության, երբեմն նաև օբյեկտիվ անհրաժեշտության գիտակցումն ինչպես հասարակական, այնպես էլ իշխանական շրջանակներում: Այդպիսով սկսվեց ապահովագրական համակարգի ձևավորման գործընթացը Հայաստանում, որը սակայն, ընթանում էր համեմատաբար դանդաղ տեմպերով, մասնավորապես սկզբնական շրջանում ապահովագրական համակարգի գործունեությունը բնութագրվում էր տարերայնությամբ, պետության կողմից այդ համակարգի կարգավորման և վերահսկողության անկատարությամբ: *Իսկ արդյունավետ կարգավորման և վերահսկողության դերը ապահովագրության զարգացման գործում անգերազանահատելի է:* Այդ ժամանակահատվածում հանրապետությունում գործում էին 82 ապահովագրական ընկերություններ, որոնց լիցենզավորման գործընթացը կանոնակարգված չէր²: Սակայն, հանդիսանալով ֆինանսական շուկայի առանձին օղակ, ապահովագրական շուկան մեծ ազդեցության լծակներ ունի տնտեսության իրական հատվածի, ինչպես նաև ֆինանսական շուկայի այլ հատվածների կայունության պահպանության վրա: Ուստի, ժամանակին էր 1996 թվականի նոյեմբերի 19-ին «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքի և նրանից բխող ենթաօրենսդրական ու գերատեսչական նորմատիվ ակտերի ընդունումը, որից հետո դրվեցին ապահովագրական գործի ապամենաշնորհման իրավական դաշտի առաջին հիմնաքարերն ու սկսեց ձևավորվել պետության կողմից կարգավորվող ապահովագրական շուկա: Կրճատվեց հանրապետությունում գործող ապահովագրական ընկերությունների թվաքանակը, և արդեն 1998 թվականի հունվարին երկրում լիցենզավորված էին 20 ապահովագրական ընկերություններ, որոնցից ապահովագրական գործունեություն ծավալում էին միայն 11-ը: 2007 թվականի հունվարի մեկի դրությամբ լիցենզավորված և գործում էին 15 ապահովագրական ընկերություն:



Փծայատկեր 1. ՀՀ-ում գրանցված և գործող ապահովագրական ընկերությունները

¹ Шахов В.В., Страхование, М.: 2004.

² ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ապահովագրական վարչության տեղեկանքները: